

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 26

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

25.12.2017թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա.Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բադոյանը - մարզպետի տեղակալ
- Ն. Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ.Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ.Պապոյանը, Ս.Լամբարյանը, Գ.Տոնոյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Ա.Շահվերդյանը, Ա.Օհանյանը, Լ.Բերոյանը, Ա.Սահակյանը, Ա.Աղլոյանը, Ս.Ղուբաթյանը, Վ.Դոխոյանը, Հ.Մկրտչյանը, Ս.Ասրյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ. Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Տ. Էվինյանը - մարզպետի օգնական

Օր ա կ ա ր գ ու մ`

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին
/Ջեկ.Ն.Սարգսյան/
2. ա) ՀՀ մարզպետների կողմից կատարված աշխատանքների գնահատման չափորոշիչների հանձնարարականի մասին
բ) Աղբահանության և սանիտարական մաքրման ուղղությամբ մարզում իրականացվող աշխատանքների կանոնակարգման մասին
/Ա.Նալբանդյան/
3. ՀՀ Կառավարության 2017թ. նոյեմբերի 23-ի թիվ 1491-Ն որոշման կատարման մասին
/Ջեկ.Լ.Ասլանյան/
4. Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մասին
/Ջեկ.Հ.Պապոյան/
5. Ձմեռային զորակոչի նախապատրաստական աշխատանքների մասին
/Ջեկ.Ս.Ղուբաթյան/
6. 2018թ.մարզի տարեկան աշխատանքային պլանի հանձնարարականների մասին
/Ջեկ.Հ.Մկրտչյան/

Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց`

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Դարբինյանին, Հ.Թադևոսյանին, Տ.Բադոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին`

ա) Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրման տարեկան պլանային ցուցանիշները ապահովելու ուղղությամբ:

բ) Անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել համայնքների կողմից պլանավորվող և 2018թ. իրականացվող աղբահանության և սանիտարական մաքրման ուղղությամբ տարվող աշխատանքների նկատմամբ:

2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Դարբինյանին, Հ.Թադևոսյանին, Տ.Բադոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Օհանյանին`

Անհրաժեշտ վերահսկողություն սահմանել համայնքների կողմից հողօգտագործման բնագավառի նկատմամբ վարձակալության պայմանագրերի կնքման և վարձավճարների գանձման գործընթացները օրինական հիմքերով իրականացնելու նպատակով և պարբերաբար ներկայացնել տեղեկատվություն:

3. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Դարբինյանին, Հ.Թադևոսյանին, Տ.Բադոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Ս.Ղուբաթյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին`

Անհրաժեշտ հսկողություն սահմանել և աջակցել համայնքների ղեկավարներին ձմեռային զորակոչը պատշաճ կազմակերպելու և անցկացման նպատակով:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին`

Մարզպետի կողմից կատարված աշխատանքների գնահատման համար սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել անհրաժեշտ տեղեկատվությունը :

5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ն. Սարգսյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ս.Լամբարյանին`

Անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել Լոռու մարզպետարանի և մարզային ենթակայության առողջապահական հիմնարկների կողմից Ամանորյա տոների կապակցությամբ շուրջօրյա հերթապահություն իրականացնելու նպատակով` համագործակցելով համապատասխան կառույցների հետ:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ